

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսական ակտիվություն	1
1.1 Արդյունաբերություն	2
1.2 Շինարարություն	3
1.3 Ծառայություններ	4
1.4 Առևտուր	5
2. Արտաքին առևտուր	6
3. Աշխատավարձ	7
4. Փոխարժեք	8
5. Հարկաբյուջետային հատված	10
5.1 Բյուջեի եկամուտներ	10
5.2 Բյուջեի Ծախսեր	10
5.3 Պետական բյուջեի հաշվեկշիռ	11
5.4 Պետական պարտք	11
6. Ֆինանսական հատված	12
6.1 Գնաճը	12
6.2 Ավանդներ և Վարկեր	13
7. Ամփոփում	14

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսության ակտիվության ցուցանիշը, կուտակային, 2018-2019թթ., %




2019թ. օգոստոսին տնտեսական ակտիվության ցուցանիշը մնացել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով 7.0% (նախորդ ամսվա ցուցանիշը՝ 6.9%): Տնտեսական ակտիվության ցուցանիշի գծապատկերից կարելի է նկատել, որ նախորդ տարվա տարեվերջին ՏԱՅ-ն ունեցել է դանդաղման միտում, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա բազան ցածր է, հետևաբար ընթացիկ տարվա ակտիվությունը դրա համեմատ ստացվում է բարձր: Ելնելով դրանից կարելի է ենթադրել, որ ՏԱՅ-ը կարող է փոքր ինչ արագանալ մինչև տարեվերջ:

Տնտեսական ակտիվության փոքր ինչ արագացումը՝ 0.1 տոկոսային կետով, կապված է նախորդ տարվա օգոստոս ամսվա բավականին ցածր աճի հետ (2018թ. օգոստոս ամսվա աճը 2017թ. օգոստոսի նկատմամբ կազմել էր 0.6%):

Ամսական աճը՝ այսինքն օգոստոս ամսվա աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ, կազմել է 7.6%, որը 7.0 տոկոսային կետով ավելի բարձր է քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:


Տնտեսական ակտիվության աճը ապահովող ճյուղերը գրեթե չեն փոխվել: Ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը՝ 6.4 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության աճին նպաստել են նաև արդյունաբերության (1.7 տոկոսային կետ), առևտրի (1.0 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-օգոստոս, %



1.1 Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018 - 2019թթ., %




Արդյունաբերության ոլորտում նկատվում են դրական միտումներ: 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 9.5 տոկոսով, ընդ որում, արդյունաբերության աճի տեմպն արդեն ամիսներ շարունակ ունի արագացման միտում:

* Գյուղատնտեսության ցուցանիշն հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 6.8 տոկոսային կետ), որի կառուցվածքում աճում են գրեթե բոլոր ենթաճյուղերը: Հատկանշական են ծխախոտային արտադրատեսակների արտադրության (աճը՝ 17%, նպաստումը՝ 2.5 տոկոսային կետ) և սննդամթերքի արտադրության (աճը՝ 7.6%, նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ) աճերը²: Նաև նշանակալի են ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (աճը՝ 70.0%, նպաստումը՝ 3.6 տոկոսային կետ) կիր չմարած, կիր մարած և կիր հիդրավլիկական՝ 54.8%, շինարարական շաղախներ՝ 3.4 անգամ աճերը:

1.2 Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018 - 2019թթ., %



Շինարարության ծավալի աճի տեմպը շարունակում է դանդաղել: Հունվար-օգոստոս ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4.4 տոկոս, ինչը 4.1 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Ինչպես նախորդ ամիս, այս ամիս ևս շինարարության աճի տեմպի դանդաղման պատճառն են հանդիսանում հիմնականում կրթության, հանքարդյունաբերության, տրանսպորտի, տեղեկատվության և կապի, ինչպես

² Արդյունաբերության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հուլիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-օգոստոս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

նաև ջրամատակարարման ոլորտներում իրականացվող շինարարության ծավալների կրճատումը³:

1.3 Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018 - 2019թթ., %




Ծառայությունների ոլորտը դեռևս մնում է տնտեսության ամենաարագ աճող ճյուղը՝ չնայած աճի տեմպի որոշակի դանդաղման: 2019թ. ութ ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ այս ճյուղն աճել է 15.5 տոկոսով, որը 3.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.9%):

Ծառայությունների աճի կառուցվածքը զգալի փոփոխությունների չի ենթարկվել: Ծառայությունների աճին ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթ, զվարճություններ և հանգստի ոլորտը, որը հունվար-հուլիս ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 5.8 տոկոսային կետով: Աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների մյուս բոլոր ենթաճյուղերի աճերը, որոնցից նշանակալի են եղել ֆինանսական և ապահովագրական գործունեության (3.5 տոկոսային կետով), ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում (2.6 տոկոսային կետով) ենթաճյուղերի նպաստումները⁴:

³ Շինարարության կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հուլիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-օգոստոս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:


⁴ Ծառայությունների կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-հուլիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-օգոստոս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 6. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-հուլիսին⁵



1.4 Առևտուր

Գծապատկեր 7. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018 - 2019թթ., %



Առևտրի ծավալները նույնպես աճում են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի ցածր տեմպով: Հունվար-օգոստոս ամիսներին առևտրի ոլորտի

⁵ 2019թ. հունվար-օգոստոս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

կուտակային աճի տեմպը կազմել է 9.0 տոկոս, որը 1.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Գծապատկեր 8. Արտահանման կուտակային աճ, 2018 - 2019թթ., %




Արտահանման աճը դանդաղորեն վերականգնվում է: Ինչպես և ՏԱՑ-ը, արտահանման աճի արագացումը մեծամասամբ կապված է նախորդ տարվա արտահանման ծավալների կրճատման (ցածր բազայի) հետ: Հունվար-օգոստոսին արտահանումն աճել է 4.6 տոկոսով:

Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.8, 2.1 և 1.8 տոկոսային կետ: Մինչդեռ, «հանքահումքային արտադրանք», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են՝ բացասական նպաստելով արտահանման աճին (համապատասխանաբար -1.3, -2.2 և -2.0)⁶:

⁶ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-հուլիս ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-օգոստոս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Ներմուծման կուտակային աճ, 2018 – 2019թթ., %




Հունվար-օգոստոս ամիսներին ներմուծումն աճել է 0.7%-ով, որը շարունակում է բավականին ցածր մնալ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ընդ որում, օգոստոսին ներմուծման ամսական աճը (նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ) եղել է բացասական՝ կազմելով -2.8 տոկոս:

Ներմուծման ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման 38.3% աճով, հանքահումքային արտադրանքի 14.2% աճով և պլաստմասսայի ու դրանցից իրերի 7.0% աճով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 2.9, 2.0 և 0.3 տոկոսային կետով: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են: Առավել նշանակալի է «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների 12.3 տոկոսով կրճատումը, որը ներմուծման ընդհանուր աճին նպաստել է -2.3 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ



2019թ. հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.7 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.1 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում աշխատավարձերի աճի տեմպը դանդաղել է՝ 3.9 տոկոսով (հունվար-հուլիսի աճը՝ 4.1%): Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.8, 1.8 և 3.9 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 178,659 դրամ, ընդ որում պետական հատվածում՝ 154,608 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 191,006 դրամ:


Գծապատկեր 10. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018 – 2019թթ., հունվար-օգոստոս, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ


Գծապատկեր 11. Անվանական փոխարժեքի միտումները 2018 – 2019թթ., կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)





2019 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ մնացել է նույն մակարդակում՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.4 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 7.4 տոկոսով:

Գծապատկեր 12. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին ամսական անվանական փոխարժեքը, դրամ



Ընթացիկ տարվա անվանական փոխարժեքի վարքագիծն առավել ակնհայտ է բացարձակ արժեքով դիտարկելիս: Գծապատկեր 11-ում կարող ենք նկատել, որ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը սկսած մարտ ամսից արժևորվում է, որի տեմպը փոքր ինչ դանդաղել է օգոստոսին:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1 Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտներն աճում են պլանավորվածից բարձր տեմպերով: 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ընդհանուր եկամուտներն աճել են 21.8 տոկոսով՝ կազմելով 997.4 մլրդ դրամ, որից՝ հարկերը և տուրքերն աճել են 21.3 տոկոսով՝ կազմելով 937.4 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը մասամբ պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների կտրուկ աճով:

5.2 Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերի աճը, և դրա բաղադրիչների նպաստումները, %



Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում կապիտալ ծախսերի թերակատարման երևույթն ավելի խնդրահարույց է դառնում: ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսներին կազմել են 897.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 7.7 տոկոսով, որը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում աճել են ընդամենը 0.3 տոկոսով: Հունվար-օգոստոս ամիսներին իրականացված կապիտալ ծախսերը կազմել են ընդամենը 51.3 մլրդ դրամ, այն դեպքում, երբ կապիտալ ծախսերի կիսամյակային ճշտված պլանը կազմում է 98.9 մլրդ դրամ, իսկ տարեկան ճշտված պլանը՝ 234.2 մլրդ դրամ:

5.3 Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-)), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն շարունակում է մնալ հավելուրդային: 2019թ. հունվար-օգոստոս ամիսներին բյուջեի հավելուրդը կազմել է 100.1 մլրդ դրամ: Հավելուրդի գոյացումը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների գերակատարմամբ: Հարկ է նշել, որ 2019թ.-ի ճշտված պլանով նախատեսվում է տարեվերջին ունենալ 153.1 մլրդ դրամ պակասուրդ, որն անհրատեսական է փաստացի տվյալների պայմաններում:

5.4 Պետական պարտք

Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12 ամսյա աճը, %



2019թ. օգոստոս վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,459.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 4.5


տոկոսով: Նախորդ ամսվա (հուլիսի վերջի) նկատմամբ կառավարության պարտքը նվազել է 12.1 մլն ԱՄՆ դոլարով (0.2%-ով): Ընդ որում, ներքին պարտքը նվազել է 4.6 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքը կրճատվել է 7.4 մլն դոլարով:

2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ կառավարության ընդհանուր պարտքն աճել է 86.6 մլն դոլարով (1.4%-ով), ներքին պարտքն աճել է 176.3 մլն դոլարով (12.7%-ով), իսկ արտաքին պարտքը նվազել է 89.7 մլն դոլարով (1.8%-ով): Արդյունքում, կառավարությանը հաջողվել է բարելավել պարտքի կառուցվածքը: 2018թ.-ի դեկտեմբերի վերջի նկատմամբ արտաքին պարտքի կշիռը նվազել է մոտ 2.4 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1 Գնաճը


Գծապատկեր 16. 12 ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպն ավելի է նվազել: Հունիսից սկսած գնաճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ օգոստոսին հասնելով 0.6 տոկոսի: Գնաճի նման ցածր տեմպերը ստիպել են Կենտրոնական բանկին այս տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ սեպտեմբեր ամսին, նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 5.5%:


6.2 Ավանդներ և Վարկեր

Գծապատկեր 17. Ավանդների 12 ամսյա աճը 2018 - 2019թթ., %




2019թ. օգոստոսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. օգոստոսի նկատմամբ կազմել է 18.6 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպը մոտ 10.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Ավանդների 12 ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 11.1 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 5.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12 ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-հուլիս⁷



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 13.3 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.1 տոկոսային կետով (աճը՝ 30.4%), ինչպես նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 37.1%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 18.8%)՝ համապատասխանաբար 2.6 և 2.9 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը նվազել է 12.3%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -2.1 տոկոսային կետով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **2019թ. հունվար-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ նախորդ ամսվա համեմատությամբ գրեթե չի փոխվել:** Ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը՝ 6.4 տոկոսային կետով, որի աճի տեմպը, սակայն, ունի դանդաղման միտում:

2. **Արդյունաբերության աճի տեմպի արագացումը շարունակվում է:** Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով, որի կազմում հիմնական նպաստող ենթաճյուղերն են ծխախոտային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունը: Զգալի աճ է գրանցել նաև ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ դառնալով մշակող արդյունաբերության ամենամեծ նպաստումն ունեցող ճյուղը: Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների

⁷ Օգոստոս ամսվա վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս չի հրապարակվել:

արտադրության աճը պայմանավորված է կիր չմարած, կիր մարած և կիր հիդրավլիկական, շինարարական շաղախներ արտադրատեսակների արտադրության աճով:

3. **ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը:** Տոկոսադրույքի իջեցումը նշանակում է, որ ԿԲ-ն վարում է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ ընդլայնելով տնտեսական ակտիվությունը: Սակայն հարց է առաջանում, թե արդյո՞ք 7.0% տնտեսական ակտիվության ցուցանիշ ունենալու պայմաններում անհրաժեշտ է վարել խթանող քաղաքականություն: Ստացվում է, որ ըստ ԿԲ-ի անհրաժեշտ է, քանի որ ցածր պահանջարկի, հետևաբար նաև ցածր տնտեսական ակտիվության մասին է մատնանշում ցածր գնաճը, որին արձագանքելով ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

4. **Հարկաբյուջետային քաղաքականության «խնայողական» վարքագիծը դեռևս պահպանվում է:** Պետական բյուջեի հավելուրդը կազմել է 100.1 մլրդ դրամ, որը թեև նվազել է նախորդ ամսվա նկատմամբ, սակայն բավականին հեռու է ծրագրային ցուցանիշից: Նշենք, որ ծրագրային ցուցանիշը ոչ թե հավելուրդ է, այլ պակասուրդ, որը կազմում է 153.1 մլրդ դրամ: Այսինքն՝ այս մասով բյուջեի կատարողականը տարեկան ծրագրից շեղվել է արդեն 253.2 մլրդ դրամով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: